


ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ  
 Ե, ՓՈՐՈՍՍԵԱՆ  
 Լամակ կամ որ եւ է  
 գրութիւն պէտք է ուղղել առ  
 Տեղիւն ԱՐՇԱՆՈՅՍ րազրի  
 ԳԱԶԻԷ (Եգիպտոս)



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԷԼ ԿՅՆԵՆԻԿ  
 ԵՂԻՊՏՈՍԻ ԶԱՄԱՐ  
 Տարեկան արդիւնք 60  
 Վեցամսեայ » 35  
 ՕՏԱՐ ԵՐԿՐՈՐԵՐ  
 Տարեկան Ֆրակտ 20  
 Վեցամսեայ » 12

E. TOROSSIAN  
 Direct.-propr.  
 du journal Arménien  
 ARCHALOUYCE  
 LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Ք Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՆԵՐԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԷԼ ԿՅՆԵՆԻԿ  
 Եւ թղթատարի ծախքը  
 Խոնարարական վրայ է  
 Խոնարարական ուղղուած  
 գրութիւնք է՝ չ'են տրուիր  
 \*  
 Ա.Զ.Գ.ՐԱ.ՐՈՒԹԻՒՆՔ  
 Կանխիկ վճարելի են

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

« ԱՐՇԱՆՈՅՍ » ի Երրորդ տարեշրջանը  
 առաջիկայ Զորքայթի 201րդ թիւէն պի-  
 տի սկսի՝ արգի սիւնակներու լայնութիւնը  
 անփոփոխ պահելով, չորրորդ սիւնակի մը  
 յաւելումը :  
 Այս առթիւ կը խնդրուի մեր այն  
 բաժանորդներէն, որոնք մինչև ցարգ ան-  
 փոյթ գտնուած են իրենց տարեվճարը ը-  
 նելու, որպէսզի հաճին կարելի եղածին  
 չափ շուտով մեր հասցէին զրկել իրենց  
 պարտոց գումարը :  
 Իսկ այն բաժանորդները, որոնք առա-  
 ջին չըջանէն ալ կը պարտին և գեւ վճա-  
 րել չ'են ուզեր, եթէ մինչև մէկ ամիս մեզ չը  
 հասցնեն իրենց պարտքերը, պիտի ստի-  
 ուինք մի առ մի հրատարակել իրենց ա-  
 նունները, իբր անպարտաճանաչ :

ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ  
 ԱՆԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Յառաջագոյն կ'ուզեմ հասկնել ազ-  
 նիւ ընթերցողներուս, թէ՛ այս գրութեամբ  
 նպատակս վիճիլ, և կամ ա՛ս ու ա՛ն թըշ-  
 նամանել չ'է, այլ իզձս է որոշ հասկցողու-  
 թեան մը առաջնորդել ներկայ խնդրոյ  
 նուրբ կէտերուն մասին ասարկարծիք գըա-  
 նուողները :  
 Անբարոյականութիւնը կը սիրապետէ  
 զարգիս մեր մէջ ու մեր շուրջը . . . Ո՛չ որ  
 կրնայ ուրանալ այս ճշմարտութիւնը՝ իրենց  
 անձերը անբարոյական արարքներով զեղ-  
 ծողները, որք արգահատութեան արժանի  
 են, այսօր գերազանց կը հանդիսանան ա-  
 մենուրեք այն դասակարգէն՝ որ իր մաշի  
 հաճոյքը ուրիշները անպատուելուն մէջ կը  
 գտնէ :  
 Իմացականութեան աէր ու փորձառու  
 բոլոր բարոյախօսներն ու իմաստասէրները  
 համբարախօսէն կը գտանին թէ՛ մարդը  
 ինչպէս որ կապուած է բնութեան անեղ-  
 ծանելի օրէնքներուն՝ պահելու համար իր  
 առողջութիւնն ու կեանքին գոյութիւնը,  
 ենթարկուած է նաև բարոյական սրբազան  
 օրէնքի մը, առանց որոյ երբէք չ'պիտի  
 կրնար մշակել յօրինուածին մէջ բնականօ-  
 րէն արգասաւորող այն համապարտ ազնիւ  
 զգացումները, որք մեր նմաններուն հետ  
 սիրով ապրելու անմիջական միջոցները կը  
 կազմեն, այս մեղապարտ հողագունդին վը-

րայ ՝ Բոլոր քրիստոնէայ ազգերը՝ իրենց հո-  
 յակապ մտքերով խոստովանած են և կը  
 խոստովանին թէ՛ Քրիստոնէական կրօնը, իր  
 մարտը ու շինիչ սկզբունքներով բարոյա-  
 կան միակ վարդապետութիւնն է, որոյ խը-  
 տայումը՝ տանաբանեային, և ընդարձակու-  
 մըն ալ Քրիստոսի կեանքին մէջ եւեթ տես-  
 նել կարելի է, ինչու որ բարոյական վսեմ,  
 սուրբ կենցաղին կեդրոնական մշտահոս ազ-  
 բիւրն է ինք : Մինչև ց'այսօր, անբարոյական  
 հոլանի ու լպիրջ գրուածներն ու շարժու-  
 ձեւերը մարդը չ'բարոյացուցին, չ'ազնուա-  
 ցուցին որպէս կը խորհին կարգ մը ինքնա-  
 կող ՝ ազատամիտները : Մարդուն սպիտա-  
 կափառ ճակտին համար դատապարտութեան  
 սև կնիքներ եղան բոլոր այդ կարգի խօլ  
 ու անամէջ ձեռնարկները : Անեն բան իր  
 պտղին կը ճանչցուի խօսքը տիեզերական  
 ճշմարտութիւն մ'է, և գրեթէ հանուր մարդ-  
 կութեան ներկայ անկեալ, անբարոյական  
 ու պունկացած վիճակը բացայայտ ապա-  
 ցոյց մ'է, մեր ազատամիտներուն ծուռ ի-  
 մաստասիրութեան ու դատողութեան հան-  
 դէպ :  
 Եթէ մեր մէջ երեցող ու շարունակ  
 բազմապատկուող ինքնահաւան ազատախոհ-  
 ներուն երեւակայած եղանակաւ մեր արդէն  
 խարխլած վարժարանները վարելու բոլոր-  
 վին զիջանինք, անտարակոյս քիչ ժամանա-  
 կէն աշխարհածանօթ Բրթի ժողովարանի պէս  
 պիտի ազգակենք ի ձայն փողոյ, սրնգի և  
 թմբակի թէ՛ « առանց քրիստոնէութեան՝ մեր  
 վարժարանները երբէք չ'են կրնար բարոյա-  
 կանացնել մեր ազգները, մանաւանդ՝ երբ  
 չար բնազդներն զարթուցանող ազատախո-  
 հական ու անկրօնային մուլտիթիւնները զար-  
 հուրելի կերպով տարածուել սկսած են բո-  
 վանդակ ծրարնայի (հայերուս) մէջ : Ընտա-  
 նեկան սրբազան կազմակերպութեան աւե-  
 բումը, խաղաղութիւնը և ոգելից ըմպե-  
 լիները իրենց կործանարար գերը սանձար-  
 ձակ կը կատարեն հիմայ, շնորհիւ մեր ա-  
 մենիւնաս ազատախոհներուն, և առնց ա-  
 մենուն շարազէտ ու ակներե հեռեանքն է :  
 Նորի՛ մարդանուազում (dépopulation), և  
 ապա՝ անբարոյացում : »  
 Գողութիւնը, ստախօսութիւնը, կեղ-  
 ծաւորութիւնը, շարաշահութիւնը, խաղամու-  
 լութիւնը, անաստուածութիւնը, ալքոլամու-  
 լութիւնը, չնութիւնը, բռնաբարութիւնը,  
 մարդատարութիւնը, հարստահարութիւնը,  
 բան մը խոստանալ ու չ'կատարելը, և ին-  
 անբարոյականութիւններ են : սակայն, ոչ  
 նուազ անբարոյականութիւն են նաև փո-  
 ղոցին վրայ հանդիպող ամեն ազգայ կամ

կնալ լրբօրէն խօսք նետել, և աչք խաղաղ-  
 նելով զայն հետապնդել ու յիմարօրէն ժա-  
 մանակ սպաննելը, և կամ՝ նախատարական  
 վարժարանի մը մէջ հազիւ իր մայրենի լեզ-  
 սին ասարքները ճանչցող մատաղ ու պար-  
 զամիտ օրիորդի մը, տարի մը վերջ, « ան-  
 բարոյականութեան սահմանը գծել տալու »  
 յանդարձ իրաւաստարիւնն ունենալու ան-  
 խորհուրդ դադարաբար փքացած սնուցանե-  
 լը, սիրա պղտորող մարտակոչ հրաւերով մը :  
 Ինու մտքի ու հոգւոյ խաղաղ քունին մէջ  
 գտնուող անմեղանակ հոգի մը երկզիմի ու  
 նենգախոհ լեզուով, ժամանակէն առաջ,  
 զարթուցանելը սազայելական անբարոյա-  
 կանութիւն մ'է, զոր առաջին անգամ  
 գործ գրաւ ստույթեան հայրը, անդնդախոր  
 ու ցեխոտ վիհին մէջ գլորելու համար նա-  
 խածնուցները, որուն տխուր հետեանքը կը  
 կրէ այսօր բովանդակ մարդկութիւնը :  
 Այս պահուն բնաւ մտքիս առջև չ'եմ  
 կրնար ունեցած ըլլալ հոգաբարձու անձ-  
 նաւորութիւնը, որ անցելոյն մէջ պարզա-  
 մտօրէն, կամ ազգայն մտաւորական ու հո-  
 գեկան կարողութիւնը լաւ մը չ'կընելով՝ ը-  
 րած էր այդ հարցը, և որոյ անախորժ ար-  
 պաւորութիւն մը յառաջ բերելը՝ ազգայն  
 շիկնելէն ու անպատասխանի մնալէն կու-  
 հելով, այլևս ազնուօրէն պնդում ըրած չ'էր  
 իր հարցման մտաին, և շարունակութիւնը  
 այլոց թողած էր : Չ'եմ կարծեր թէ այդ  
 օրինակ հարց մը ինորոյ ընելու փափաքն  
 ունեցող անձը անտեղեակ ըլլայ վայելչու-  
 թեան օրէնքներուն նուրբ տրամադրու-  
 թիւններէն, որք նմանօրինակ միջավայրի  
 ու պայմաններու մէջ յաւետ կը դատապար-  
 տեն այդ կարգի անտրամաբան մտածուցնե-  
 րն ու ձեռնարկները, և որք միշտ անբա-  
 րոյականութիւն ըլլալէ չ'պիտի դադարին :  
 Բարոյականի տէր մարդը չ'ցանածը հնձելու  
 բռնապետական պահանջը չ'ընէր բնաւ : Ա.  
 մեն բան մեր . ու մեր երեւակայութեան առ-  
 ջև ունեցած բարձրագոյն կրթարաններուն  
 վրայ չ'չափենք . հազիւ հայերէն մը գիտցու-  
 զին՝ գաղիերէն լեզուով հոգեբանութեան  
 վրայ չ'ճառենք : Խնդիր մը մանրամասնօրէն  
 չ'հետազօտած, և այդ նկատմամբ բացառ-  
 րութիւններ պահանջելու իզձը ունենալնիս,  
 չ'եմ գիտեր ի՞նչ զգացումէ շարժեալ,  
 խնդրոյ աւարկան կազմող անձերէն միայն  
 յայտնելէ վերջ՝ չ'ըրած, նոյն խնդիրը չօ-  
 շափող նիւթի վրայ գրելը բարոյականու-  
 թիւն է :  
 Յարգեցէ՛ք պատշաճից օրէնքը, և ինչ  
 բան որ ի խոր կը խոցէ ձեր եղբօր կամ  
 ընկերոջ սիրտը, ընելէ զգուշացէ՛ք, եթէ

բարոյակամութեան ու անբարոյակամութեան ներհակ սահմանները ձեր յուսակամ ծին շարք արգարև բաժնետեր էք . . .

Ազնիւ զգացման արդարեւ չ'իրար ըլլալ, ներկայ պայմաններուն մէջ, վերեւ ներկայացուած փափաքը, զոր երբէք ի գործ դնել պիտի չ'իրանք գեւ բարոյակամութեան նուիրական քօլը խնայարկութեամբ պահել սիրող ժողովուրդի մը անտի զաւակներուն մէջ, սրտց առեղծուած կը թըռուի մինչև ցայսօր մարդակազմական ու բընախօսական գիտութիւններն իսկ :

Անթիլ է, անթիլ . . . Լրբութիւնը՝ ումանց կարծածին պէս սրբաբանութիւն չ'ընշանակեր : Այս մտար ընթացքով չ'ենք նորոգեր, այլ կը խրամատենք հազար ու մէկ վշտերու տակ ընկճած վերապատ ժողովուրդի մը միակ փառքը կտրուող բարոյակամ շրջանակը, որ արդէն փլվիլիւծ հանդամանք մը զգեցած է վերջին գաղթականութիւններէն ի վեր : Այս տեսակ փրօցուող ճիշտուններու և յոռեղոյն գաղափարներու համաճարակ արշաւանքին առջև պատուար կանգնելու անմիջական միջոցներուն վրայ լրջօրէն խորհրդածելը ժողովուրդին բարոյաւէր, բանիրուն ու լրջամտ գաղափարներն նկատուածութեանը կը յանձնեմ, որք իրենց պատուական ու բարենպատակ գործը ի գլուխ հանել կարենալու համար, միանգամ ընդմիջ վանելու են իրենց շրջանակէն զեղիս, խաղամու և անկրօն անձերը, որոց դձուճ գործերը՝ գիշերը խաւարին մէջ միայն կրնան յաջողիլ, և որք ցորեկը չ'խայտառակուելու համար կեղծաւորութեան նրբահիւս պատմութեանը հազնիլ լաւ գիտեն :

Մարդուն բոլոր փառքին մէջ իրական մէկ նպատակ կայ միայն . բարոյակամ կեանքը, որոյ ճշգրիտ իրականացումէն կախում ունի կատարեալ երջանկութիւնը :

Հայեր, կիկո մնացէք յաւէտ ձեր ընտանեկան պարզ յարկերուն տակ, ձեր հա-

րազատ կնոյ ու սիրտուն զաւակներուն մօտ, քան եղիպատի պղծ պղտեղարաններուն մէջ տապալակող ազատութիւն ու բաց բերան մրանկօ մը :

Կ. ՈՒՋՈՒՆԵԱՆ

Գահիրէ 28 Յուլիս 1901

ՄԵՐ ԱՌԱՋԻՊԱՅ ՓՈՒՈՂ ԿԱՐԳԱԼ

Երկամեայ սեղեկագիր « ԱՐՇԱԼՈՅՍ » — Ե. ԹՈՐՈՍԵԱՆ

Սահմանադրութեան պաշտպանները — Տ. ԼԵՆՈՆ ՄԿՐՏԻՉԵԱՆ

Կրպոսի Որբանոցին շուրջը — ՏԻՍՐ Ա. ՊԱԼԵԱՆ

Պատասխան մը — Տ. Յ. ՇԱՄԼԵԱՆ

Յօդուածի մը մտքուած մասերը (Շարն. թիւ 199 հէ) Ե. ԹՈՐՈՍԵԱՆ

ՋԱՆԱՋԱՆՔ — ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ՏԻՐՈՒՆԻ

Անցեալ շաբաթ օրը, 27 Յուլիս, կէս օրէ ետք ժամը 4 ին Ժամկոչեան և Շէրիտեան ընտանիքները գառնաղէտ կորուստ մը ունեցած են յԱզէքսանգրիտ, յանձին՝

ՏԻԿԻՆ ՆՈՅՆԻ ԺԱՍԿՈՉԵԱՆԻ (ՄԵԱԼ ՇԻՐԻՏՅԱՆԵ)

որ քսանամեայ ծաղիկ հասակին մէջ կը թողու այս չարչարանաց հովիտը :

Տիկին Նոյեմի այս կանխաժաման մահը, քանի մը տեսակէտներով խորապէս կը խոցէ իրեններուն սիրտը, նախ՝ որովհետև գեւ հազիւ 6-7 ամիս կայ որ իր ձեռքը տուաւ համակրելի Տր. Միտաք Ժամկոչեանին. երկրորդ՝ իգական սեւը ապագայի համար կը կորսնցունէ իր կարեւոր ներկայացուցիչներէն մին՝ բարի և ազնիւ, որ զարգացած հօր մը ինչպէս է Վ. սեմ. Կ. պէյ Շէրիտեան, մասնաւոր ինամոց տակ, ստացած էր կրթութիւն մը ինամեալ և կանոնաւոր :

— Տղա՛յ, ըսաւ, հիմա հոս մարդ մը պիտի գայ. ես անոր հետ պիտի խօսակցիմ. դուն քու գործը պիտի շարունակես, բայց ականջներդ մեր կողմը պիտի ըլլան :

Իտալացին հազիւ ըմբոսցած էր իր հրահանգները, երբ Ղուկաս էֆէնտի խանութէն ներս մտաւ ժպտուն :

— Պօնօրնօ . Սիւնիօր ձիրօլամօ, գոչեց օրէնսպէտը երկու ձեռքերը կարկառելով տաղձադործին, ինչպէս էք, աղէք էք :

— Պօնօրնօ, փաստաբան էֆէնտի, պատասխանեց ձիրօլամօ, ինչ մեծ պատիւ, ո՛րքան պատիւ, հրամայեցէք նստեցէք :

Եւ միեւնոյն ժամանակ աթոռ մը կը քըշէր դէպ այցելուն, անոր երկնցած ձեռքերը չի տեսնել ձեւացնելով :

— Ենորհակալ եմ, շնորհակալ եմ, սիւնիօր ձիրօլամօ . նստիմ, այո՛, նստիմ քիչ մը :

— Ապագրիքք գո՛րծ մ՛ուռնիք արդեօք, փաստաբան էֆէնտի . պահարա՞ն կ՛ուզէք, գօնն՛օյ կ՛ուզէք, պիւֆն՛ կ՛ուզէք :

— Ո՛չինչ, ո՛չինչ, սիւնիօր ձիրօլամօ . աստից ոչ մին չ'եմ ուզեր առ այժմ . երբ ամուսնանամ, անշուշտ շատ բաներու պէտք պիտի ունենամ, սիւնիօր ձիրօլամօ : Այսօր կարեւոր խնդրոյ մը համար եկայ, սիւնիօր ձիրօլամօ : Եթէ զիտնայիք թէ ո՛րքան ուրախ եմ ձեզ քաջատղջ վիճակի մէջ տեսնելուս, սիւնիօր ձիրօլամօ : Ես աստից, շատունց կը փափաքէի ձեր ձեռքերը սեղմել, ձեզի հետ բարեկամանալ, բայց զբաղումներըս, անպատ, տաղակալի զբաղումներս միշտ արգելք եղած են իմ այս փափաքիս իրականանալուն : Այսօր՝ վերջապէս՝ առիթ մը գտնելով

երրորդը՝ որ այժմ ամենէն մեծ տեղը կը գրաւէ, անմիջապէս կը թողու համակրելի Տօքթօրը, որ յանձին ողբացեալ Տիկին Նոյեմի ընտրել գիտցած էր կեանքի ընկեր մը, օժտուած օրինակելի դատարարակութեամբ և արժանեօք :

Ազնիւ Տր. Մ. Ժամկոչեանի և հանդուցեալ Տիկին Նոյեմի անմիջապէս հօր, Վ. սեմ. Կ. Պէյ Շէրիտեանին, ի սիրա և ի հօգի երկնային միթարութիւն հայցելէ անդին ու չինչ կրնանք ընել : Կորուստը մեծ է և անգարմանելի :

Ազէքսանգրիտյ Ռեկտօրին 30 Յուլիս, երեքշաբթի օրուան թուոյն մէջ կը կարգանք ողբացեալ Տիկին Նոյեմի թաղման հանդիսին հետեւեալ մանրամասնութիւնները :

« Պ. Տր. Ժամկոչ, Ազէքսանգրիտյ Բարեգործական-Ազգատարնամ Ընկերութեան համակրելի Ատենապետը, գառնակալի ձիւն հիւանդութեան մը հետեւանօք կորսնցուց իր կազակիցը :

« Յուզարկաւորութեան հանդէսը կիրաւի օրը սեղի ունեցաւ ընտրեալ՝ բայց խուս՝ ուրն շքագիրներու մասնակցութեամբ : »

« Եգիպտոսի Հայոց Առաջնորդ Գեր. Այլապէս Եգիպտոս յուզարկաւորութեան տխուր հանդէսին կը նախագահէր . ծածկոցի ծոպերը բռնած էին Ն. Ն. Վ. Վ. Յարուսթիւն և Միքայէլ Ռէյիլեան պէյերը . Արթիւն պէյ Ստեփան . Տր. Հատտատ, Անթուան փոխի և Պ. Ջարեհ Սըլալի :

« Եսա մը գեղակերտ և շքեղ պսակները զրկուած էին հետեւեալներուն կողմէ . Ժամկոչեան և Շէրիտեան ընտանիքները . Ազէքսանգրիտյ Պատ. Թաղ . Խորհուրդը, արտաքին գործոց նախարարութիւնը, Վ. Աբրահամ պէյ Բարթոլ, Գաւրի դեղարանը . Պ. Ջարեհ Սլալը, Պ. Միլէլի ընտանիքը, Տէր և Տիկին Էրիլէր, Գ. և Կ. Միլլոնեան եղբարք, Հ. և Կ. Չէլաբեան, Կ. Ժամկոչեան, Ա. Ղազարեան, Տէր և Տիկին Ինիաս Գասիլէլի . Տիարք Պ. և Գ. Օհանեան, Տր.

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ANCH' IO SON UOMO (ԵՄ ԱԼ ՄԱՐԳ. ԵՄ) (16)

Ը .

Ճիւղէրէ մէկ կողմ քաշուեցաւ տախտակ մը յղկելու համար, եւ ձիրօլամօ՝ միշտ ծիծաղելեալ նստաւ աթոռի մը վրայ :

Հիմայ շուկան սղեւորուած էր . բացի շրջուն մանրավաճառներուն կողորդայիբ գոռուճ գոռուճէն, ամեն խանութէ ձայն մը կը սլանար, հրաւէր մը կը թռչէր դէպ անցորդները : Գիւղացիները, լեռնցիները՝ իրենց բեռնաբարձ զբարասաններով զիրար կը գիմաւորէին, եւ լուսանքի, հայհոյանքի սեղատարարներով ազատ անցք կը պահանջէին իրարմէ : Փէլլահի մանկամարդ կիներ, նորարոյս աղիկներ՝ միշտ ժպտուն, միշտ սիրազրգիւ՝ իրենց պանիրն ու հաւեղէնը, կարագն ու մածունը կտապատիկ գիներով կը շնորհէին վաւաշտ ձերբերու, ցանկասէր երիտասարդներու, որոնք կը բուսականանային գիւղով, լաւ գիտնալով որ իրենց որ եւ է անտեղի կատակարանութեան զրեթէ միշտ կը պատտխանուէր այդտակահարութեամբ, եւ երբեմն ալ մարդասպանութեամբ :

ձիրօլամօ՝ անհունապէս բերկրատիթ երազներու մէջ սուղուած՝ կը նայէր ասանց տեսնելու . կը լսէր ասանց հասկնալու . երբ յանկարծ աչքերը կէտի մը վրայ յարեց, եւ ձիւղէրէին քով վազեց :

վաղեցի եկայ իմ անկեղծ զգացումներս յայտնելու ձեզի, սիւնիօր ձիրօլամօ :

Մերունի Իտալացիին կարծես կ'ուռնար շոյուած կատուի կը չիտնար քնքուշուած մանուկի պէս, Կէս խուր աչքերը հաճոյքէն բոլորովին գոցուած կը թուէին, եւ շուրթներուն վրայ գրեթէ աննշմարելի ժպիտ մը կը թռչտէր փաստաբանը ոչքին ծայրով կը հետեւէր այս ստակ մը այլափոխութեան եւ ինքն ալ իր կողմէն արտասովոր գոհունակութիւն մը կը ցուցընէր մերթ ձեռքերը չիտելով, մերթ ընչացքը սլորելով :

Իայց յանկարծ քունէ արթնցողի մը պէս ցնցուեցաւ ձերունին եւ մեղմ ձայնով հարցուց . — Փաստաբան էֆէնտի, որո՞ւ ուղղեցիք ձեր այդ անուշիկ խօսքերը :

— Ձեզի, սիւնիօր ձիրօլամօ, ձեզի, ձեր անձին . . .

— Իմ անձին . . . իմ անձին ձիրօլամօ ըլլալը բաւական երկայն ժամանակէ ի վեր գիտէք, բայց սիւնիօր ըլլալը դեռ նոր լսեցի, մանաւանդ այս քաղաքին մէջ :

— Ձուարճատէր էք, սիւնիօր ձիրօլամօ . կը ցուիմ որ ձեզ աւելի կանուխէն չ'ճանչցայ : Իայց ինչուիցէ, իղած կորուստը անգարմանելի չ'է : Եւ եթէ կ'ուզէք հետո սրճարան գալ եւ դիւնի մը խմել պիտի գիտնաք որ ձեզի անկեղծօրէն բարիք ուզող անձ մըն եմ . բարիք՝ զոր ձեր ծնունդէն ի վեր ձեզ ճանչցողները չ'են ըրած ձեզի :

(Շարունակելի) Ա. ՊԱԼԵԱՆ


Թէօֆիլ , Տր . Զորլեան , Տէր և Տիկին Լեան Մկրտիչեան :

« Արշալոյս » ի Խմբագրութիւնը այս տխրաւիթ պարագային մէջ կը յայտնէ իր անկեղծ ցաւակցութիւնները Ժամկոչեան և Շէրիտեան ընտանեաց :

ԼՆՁԵԱԿ

Մարգարիտ-Սերնախն

Ողբ



Անցեալ գիշեր , ուշ տուն , հէ՛գ Մարգարիտ-Սերնա , Անցած աստուծոյ Օտիէնթըլ պատին քովէն , — Զոր պիղծ քաղթիս Մարգարիտ յո՛յժ կը գովեն , Երկի-ալիւր-միս կախարհներո՛ւն ոգեհմայ :

Ի՛նչպէս երան նուագին համար քար կարեցայ Յանկարծ , կ'ըր . . . , ախ՛ ո՛վ անկու՛մ , բաց պատուհանէն , Տեսա՛յ որ խու՛մը մ' վարժապետներ , աւա՛ղ , հո՛ն են , Ան բողբո՛ւն հեռ ծունկ՛դ ծունկի . . . Սրտմտեցա՛յ :

Սուրբ զայրոյթով մը լիցուած , ա՛խ մանաւա՛նդ երբ տեսայ հոն ան երբեմնի քու տէր-Ոսարէտ , Որ ուխտեր էր սիրով յարած մնալ քեզ յաւէ՛տ :

Ուխտագրութ այժմ , լքած քեզ , իր հէ՛գ անգին աւանդ , Եկեր ինկեր էր մուրթիւն աղմոյն յատակ . . . : Ի՛նչպէս քեզ դառնապէս , հէ՛գ , ողջ նահատակ : ԶՂՁԻԿ

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՏԻԱՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՇԱՄԼԵԱՆ . — Իրաւարանական վարժարանի ուսանող Տիար Յարութիւն Շամլեան , որուն ասկից առաջ Յարանա մեկնելը գրած էինք , իր քննութիւնները էքսի ծագելով թէին առաջ յաջող կերպիւ անցնելէ և Պաշտօնի ան տրուած աստիճանին ընդունուելէ վերջ , այս շարժումն Մեստերիով քաղաքս վերադարձած է :

Իր յաջողութեանը լուրը անկեղծ ուրախութեամբ կը ընու զմեզ :

Վստահ ենք թէ՛ առաջիկայ տարի ևս — որ իր վարժարանական շրջանին վերջին տարին է — պիտի կարենայ նոյն յաջողութեամբ անցնել իր յիսանսի քննութիւնները :

Տիար Յ . Ալիարի « Նար-Օր » ի մէջ հրատարակած « Անբարոյականութեան սահմանները » յօդուածին աւթիւ , Տիար Յ . Շամլեան թերթիս Խմբագրութեան պատասխան մը զրկած է , զոր պիտի հրատարակենք մեր առաջիկայ թուով :

ԳՆԻԱՄՈՒՂԻ ԱՇԽԱՐՀԷՆ . — Երոզացիներուն է՛ն սիրելի մէկ խաղն ալ հետզհետէ հայերուն կ'անցնի :

Բրքի-Էթիքսիէնի 21 Յուլիսի 20րդ . թուոյն մէջ գնդամուղի աշխարհին պատկանող լուր մը արձանագրուած կը գտնենք որոյ մէջ հայ դէմք մը իր մասնաւոր տեղը գրաւած ըլլալուն համար կ'արտատրուէինք նոյնութեամբ :

« Անկարելի է ուրանալ , կ'ըսէ Բրքի-Էթիքսիէն թէ՛ ընդհանրապէս մարմնամարզական ամեն տեսակ խաղեր եզրկատուի մէջ մեծ ընդունելութիւն գտած են . ինչպէս

մենամարտ , ձիարշու , հեծելաձիւ , շոգեշարժ կառքեր , ևն . սակայն պէտք է մտնալ պիլատոնի որ ամենէն նուազ զանց առնուած է . »

Ժամանակէ մը ի վեր գնդամուղի կատարեալ մրցումներ սկսած են Կուսն Գաւէ Էթիքսիէնի մէջ , ուր տեղ կը հաւաքուին ամեն գիշեր այս խաղին ամենաքաջ անարժեքները : Ասանց ամենէն առաջինը առանց տարակոյտի պէտք է դասաւորել Տ . Պետրոս Մելիքեան , բնիկ Զմիւռնիացի , որ այժմը դժագրիչ է Հանրագուծ Շինութեանց Նախարարութեան մէջ . միայն ինքն է որ իրապէս սերի անթիքիէն ըսուածը կրնայ խաղալ , հետեւելով Վինեթի կանոնագրութեանց և սկզբանց , և Գահիրէի մէջ 130էն մինչև 200 գաւառացիներ միանգամայն ըրած ունի : Նոյն իսկ անցեալ գիշեր , կ'ըսէ Բրքի-Էթիքսիէն , 110նոց գեղեցիկ սերի մը տեսնելու հաճոյքը սենեցանք , և 30 վայրկեանէն նուազ ժամանակամիջոցի մը մէջ , գրատախտակին վրայ նշանակուած էր 280 թիւն :

« Անտարակոյս խաղացողները Վինեթի և Սլոտոն չ'են . բայց Գահիրէի նման տեղ մը , ուր լաւագոյն պիլատոններ չ'կան Էթիքսիէնէն զատ , վերոյիշեալ թիւերը աննշան քանակութիւն մը չ'են ներկայացներ : »

« Պ . Պետրոս Մելիքեանէն անմիջապէս յետոյ կուգան , ծանօթ Պ . Տիմիթրիւն . Եռսուտի Պէյ Շարիք , Եսպէս , Եսնքո , ևն . ուրնք գնդամուղը կը խաղան յայտնի վարպետութեամբ մը : »

Կիճի ԱՐՄԱԻԵՆԻՆԵՐԸ . — Վերջին հաշիւները կը ցուցնեն թէ Կիլիկի արմաւենիներու թիւը 30,000 աւելցածէ վերջին հինգ տարիներու մէջ :

ԱՍԻՈՒԹԻ Գատարանը ց'ըկեանս տաժանակիր աշխատութեան դատապարտած է երիտասարդ Ասատը որ ժառանգական ինքնուրոյ մը համար հօրեղբորորդին սպաննած էր : Սպանիչը և զսհը Ասիոյ Վերսիլեան վարժարանին աշակերտներէն էին :

ԱՐՄՊԻ ՓՎՇԱ . — Նախարարաց ժողովը որոշեց Սէյլանի կառավարութեան միջոցաւ 800 ոսկի զրկել Արապի փաշային , որուն մէկ մասը պիտի գործածուի անոր պարտքերը վճարելու , իսկ մնացեալը ճանապարհածախուց համար :

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԸ . — Իտալական Թրոնիպիւնա թերթին մէջ հետեւեալը կը կարդացուի :

Յունական կառավարութիւնը փափաք յայտնած է տարմիջ մը զրկել թրքական ջուրերը , այցելելու համար Զմիւռնիա , Սալոնիկ և Աթոս կղզիները :

Բարձրագոյն դուռը՝ քաղաքական պատճառներով դեռ մինչև ցարդ իր արտօնութիւնը տուած է՛ :

Բանակցութիւններ տեղի կ'ունենան Կ . Պօլսոյ Յունական ներկայացուցիչ Պ . Մալքոզորտաթօի , և արտաքին գործոց նախարար Թէվֆիկ փաշայի միջև :

— ԱՐԻՒՆԱՀԵՂ ԿՈՒԻ . — Կ . Պօլսէն Տէյշի Մէյի ուղղուած հեռագիր մը , Պուլկարներու և իր քոյր մէջ նշանակելի և արիւնահեղ կռիւ մը կը ծանուցանէ :

Կ'ըսուի թէ երկուստեան մը Պուլկարներ թարթիտ . սահմանազխտուն վրայ գրաւուած փոքրիկ գիւղ մը պոչաւած և կողպտել ուզած են :

Մինչդեռ Պուլկարները իրենց կողպուտով դրաւած են եղեր , աւազակներու խումբ մը վրայ հասած և սկսած է Պուլկարները պաշարել , յուսալով որ այս վերջիններուն ձեռքակալու մը կամ մահը , անցեալի մէջ իրենց գործած բարբոս գողութեան և սպաննութեան մեղքերուն անյիշատարութիւն պիտի պատճառէ : Բայց ասոր հակառակ տեղի ունեցած է . երբ երկու կողմէն ալ կռիւը կը սասկանայ , թուրք զօրաց վաշա մը վրայ հասնելով թէ՛ աւազակախումբը և թէ՛ միանգամայն Պուլկարները ընաշինջ կ'ընէ :

ՁԻՆԱՍՏԱՆ

— ՇՓՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՔՈՒԱՆԿ-ԹՈՒՆԻԻ ՄԷՁ . — Քանթօնէն կը հեռագրեն թէ՛ քառասունէն աւելի հոգիներէ բաղկացած աւազակներու խումբ մը , երեք գիշեր հետապնդած է Շա-Միէնի գիմաց կառուցուած վաճառատանները կողպուտելու համար :

Ձինական իշխանութիւնները զանոնք ձեռքակալելու ո՛ր է ջանք չ'են ըներ : Ձինացիք նոր խառնաշփոթութիւններ կը նախատեսեն : Զրոյց կը շրջի թէ՛ հիւպատոսներուն զեկուցուած է մտաւորաւ խռովութեան մը երեան զալու մտախն . Քրոնսական մարտանաւ մը Պօկի մօտերը կ'սպասէ խարսխած :

Շուն-Թաք գատարուրը կը յայտարարէ թէ՛ աւազակախումբին թիւը կ'աճի այս նահանգին մէջ : Երկու ամսուան մէջ վաթսուն և հինգ աւազակներ գլխատուած են :

ՆԱՄԱԿԱՏՈՒԹ

Ասիոյ Կ . Հ . — Շնորհակալութեամբ գանձեցինք Ձեր տարեկան բաժանորդագիրը . ստացականը զրկուեցաւ Ձեր հասցէին :

Թաւրիզ (Պարսկաստան) Հ . Բ . Հնկ . Նախագահ-Տիկին Ա . — Ձեր նամակն ստանալու պատիւն ունեցած ենք :

Այն անձը՝ որուն յանձնարարած էիք Պատվորչութեանը կողմէ վճարել , իրաւացի առարկութիւններով չ'կատարեց Ձեր խնդրանքը :

Արդէն Ձեր հասցէին ուղղուած մասնաւոր նամակաւ մը մենք մանրամասնած ենք խնդիրը : Փափաքելի է ուրեմն որ փութով պատասխանուէ շնորհն ընէք :

ԱԶԴ

ՕՆԵՆԻ ՊԵՅԼԵՐԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել արգոյ հաստատակութեան թէ՛ ամսոյս 25 էն սկսեալ Աթապա-Էլ-Խաւաթէն փոխադրուած է Շարա-Ապտիւլ-Ազիզ , Եզրպատկան թատրոնին քով գտնուած սափրիչի խանութը :

Օ . ՊԵՅԼԵՐԵԱՆ կը յուսայ թէ իր յաճախորդները պիտի բարեհաճին ըստ առաջնոյն շարունակել իրենց այցելութիւնը , վստահ ըլլալով ոչ գործեալ ո՛ր է ջանք չը պիտի խնայուի զիրենք գոհ կայուցանելու համար :

Պատ . յաճախորդք պիտի գտնեն նաև անուշահամութեանց և բոնաշիքի վերաբերեալ բազմաթիւ և ընտիր աւարկաներ խիստ գիւրամատչելի գիներով : Փորձեցէ՛ք և պիտի համազուգիք :

ՄԹԱՌ ԼԱՅՖ

ԼՈՆՏՈՆԻ ԱՊՐԷԼԻԱՆՏԻՆԻ ԲՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնադր 1843

Բացարձակ ապահովութիւն. — Չափաւոր ապահովագրիչ. — Ապահովագրիչ հաստատութեան համաձայն շահու առաւելութիւն. — Իրական պահպանութիւն՝ ապահովագրի վճարմանը յապաքու մի պահուն. — Չափող պարագաներու մէջ անմիջական հաշուեյարգարութիւն. — Եահու բաժանում ամեն ՀԻՆՏԻ ՏԱՐԻՆ մէկ անգամ :

Ս. ԼԻՕՆԱՐ

Բնդհանուր ներկայացուցիչ եգիպտոսի

ԹԱՅՃԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ

ԵՒ

ՄԱՆԿԱՊԱՐՏԻՋ

Ի Եարս Մոնթանիէս Աշի

Թիւրքիսի ղեկավարակն ղիւնսի փողոցին մէջ թիւ 7

Սոյն հաստատութեան մէջ կ'աւանդուին Մայրենի լեզու, Ֆրանսերեն, Կրօնագիտութիւն եւ ամեն գիտութեանց սկզբունք. Օրինորդաց համար ամեն տեսակ ձեռագործք :

Մտղք գո՛ւ պիտի մնան իրենց զաւակաց արուած մասնաւոր խնամքներէն. փոփոքողք կրնան ղիմել ի վարժարան ամեն օր 8-11, բացի կիւրակէէ :

ԿՕՇԿԱԿԱՐ

Փ. ԵՒ Յ. ՊԵՇԻՐԵԱՆ ԵՂԱՐԻՔ Պազար-Մարտի թիւ 39

Կ'ուզէ՞ք սնենալ հմուտ վարպետի ձեռքէ ելած, ֆրանսական նորաձեւում եանց համապատասխանող, ուրքերը կոշտերու ցաւերէն աշատ պահող ե ղիմացկուն կօշիկներ :

'Իմեցէ՛ք ի Պազար-Մարտի թիւ 39 խանութին մէջ հաստատուած Պէշիրեան եղբարց, որոնց գործածած ապրանքներու սակունութիւնն ե ձեւերու մասին սնեցած հոգածութիւնը ամեն սարակայտէ վեր է : Պէշիրեան եղբարք իրենց յաճախողաց բարձր յանձնարարութիւնները փութով ե մեծ խնամով կը պատրաստեն :

Բաւ է միայն մէկ անգամ՝ ղիմել իրենց. ապահովագրէս մնայուն յաճախողք պիտի լինիք :

ՔԱՐԻՈՒՏԻ ԸՆՏԻՐ ԱՃՈՒԹ

Ունեինք մինչև ցարդ հայ մը որ ղիտնար մասնէլ թէ՛ անուին ալ մեծաքանակ սպառում կ'ունենայ ե կրնայ կարեւոր շահ արտադրել :

Առեւտուրի այդ սպարէզն ալ օտարնուրուն թողուած էր :

Տիրոջ Յակոբ Վարդանեան (Սանտուանի քեռորդի) այժմ ամենաշնորհ անուրի վաճառականութեամբ կ'ըրթի ե մրցում բացած է օտարներուն դէմ :

Դիմեցէ՛ք իր միջբանոցը Սուգ-Ուտար թիւ 17 ե 18 :

Անխարդախ կշիռ եւ չափուոր գին :

ՀՅԵՎԱՆԻ ՎԻՍՏԱՆՆՈՒԹԻՒՆ

Table with 6 columns of numbers: 01-09, 10-18, 19-27, 28-36, 37-45, 46-54

ՏՊԱԿՐՈՒԹԻՒՆ Ե. ԹՈՐՈՍԵԱՆԻ

ՊԱՌԼՈ Մ - ՊԱՍՄԱՃԵԱՆ

ԵՒ ԸՆԿԵՐՔ

ՕՔԵԼ ՄՅՆՖԵՐԱԹՕ ԱՂԵՔԱՆԴՐԻԱ

Պատիւ ունինք ծանուցանել արգոյ հասարակութեան թէ վերջերս հաստատուած ըլլալով հրատարակս, կ'ընդունինք եւ կ'ստանձնենք ամեն տեսակ եւ ամեն ազգի ապրանայ յանձնարարութիւնք, ինչպէս ժամացոյցի, գոհարեղնաց, արեւելեան եւ եւրոպական զանազան տեսակ գունաւոր եւ ձերմակ քարերու, Գօթմպիական Ֆօնօկրաֆներու, ինչպէս նաեւ գրուած եւ անգիր խոզովակներու. — գովան. — (մեծաքանակ) . եւրոպական նրբաձիւս կողովիկներու. եւ հոսեղնաց եւայլն :

Մասնաւորապէս համաձայնած լինելով Պօլսոյ Անտէլիպ (Մարտիրոս Պէշէրեան) աւան հետ, որուն ապրանքները մեծ գնահատման արժանացած են նոյն իսկ եւրոպական հրատարակաց վճարայ, միշտ ի միջի ունինք յիշեալ հանրածանոթ ամեն ամեն տեսակ ապրանքները. ինչպիս Re-producteur Andelip (Ֆօնօկրաֆի ասեղ) որ անմրցելի է հրատարակին վրայ, եւ Գօթմպիական Ֆօնօկրաֆներու ներկայացուցիչ Մ. Պասաէօսի սքանչազման ստարկայն եղած է :

Մեր արամադրութեան սակ ունինք Անտէլիպ գործարանին զանազան նուագներն. ինչպէս Մանսիլն, Բաւնոն, Ուր եւն. եւ Ֆօնօկրաֆի համար առձեռական եղանակներու վրայ չափուած հին եւ նոր վարպետ երգողներու ընտիր Գովաններ :

Կ'ստանձնենք կատարել Մաքսային ամեն տեսակ գործողութիւնք փութով եւ չափաւոր փոխարինութեամբ :

Կը գանձենք զանազան երկիրներու փոխանակ սքրքր :

Բաց ստան ընկերութիւնս Լոնտոնի, Պօլսոյ, Գահիբէի, Եաֆաթի եւ Երուսաղէմի մէջ թըղթակիցներ ունենալով, կ'ստանձնէ այդ սեղերուն համար ամեն տեսակ ներածում եւ արտածում :

Մեր հասցէն է CARLO M. BASMA DJIAN et Cie. Okelle Monferato Alexandrie

Ս Ի Ն Կ Ե Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ժ. ՆԱՅՏԼԻՆԿԻՐ

Պաշարի փողաց. Խաղնէտարի սեփականութիւն, Պրիսթլ Սթէլի ճիշդ ղիմաց, Գաֆէ Տը Լա Պուրսի կից :

ՀՆԵ ԵՒ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՂՈՐ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ 6500-ՄԱՍՆԱՃԻՂԻՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԵՐ ներն են եւ ասոնցմէ մինչև ցարդ 17,000,000 ծախուած է :

400 է աւելի վիսյակներով եւ մեխայններով վարձատրուած, երաշխարեալ մեքենաներ :

ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ


Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստանադիսիս մէջ ստացած է :

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻՔԻՆ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂԻՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՑ

ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն. Բ. ԱՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ, ուշագրութիւն գարձեւել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԵՐ ի յասկանչիս :



Չրի գտներ ե նորոգութիւններ, ՍԻՆԿԵՐ մեքենայից համար, յաճախողաց սուներուն մէջ :

Վճարմանը Դիւրութիւն

Փոխանակութիւն ինմեքենայից եւ նորոգութիւն ամեն կազմի Մեքենայից

ԳԻՆ ՉԱՓԱՒՈՐ

ՏՀԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՇԻԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՇԵԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 563 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահարածիւնները :

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ որ գրեթէ այլաբար ուրիշ սրէ է ընկերութեան մէկ միլեար աւելի է :

ԳԵՈՐԳ ԵԿԱԻՕՏ ներկա, յարուցիչ ի Դահիբէ

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ օր եւ ընկերութեան աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ ե հրատարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի ե աւելի ապահովագրին կը գանձէ :

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՕՆ գլխաւոր գործադատար յՊղեբրանդիա :





